

ԱՐՏՕՆԱՏԵՐ. AGOS YAYINCILIK BASIM HİZMETLERİ SAN. ve TİC LTD. ŞTİ. ամուսնով՝ Բահիլ Տիմք, Հիմարյանի՝ Հրանդ Տիմք, ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՎԱՐԻՉ՝ Ռոպեր Բոսիթաշ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԸՆԴՅՈՒՆՆԵՐ՝ Պարոյր Գույումճեան, ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԳԱՏՈՒ՝ Էթիմ Մահոնյան, ՀԱՍՑԵ՝ Հայաստանի Հանրապետության Պողոտայ, Սեպաթ Ափթ. 74 յարկաբաժին 1 Օսմանյեյ, Իսթանբուլ: Հեռ. 0 212 296 23 64 - 0212 231 56 94 Ֆաքս. 0212 247 55 19 ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ՝ Տիմիա Սիփեր Վեյ Օֆսեր Ա.Օ. «Կոպուր Տիմիա Պատրոն» 100. Ելլ Մահալլեք, Պաղըլար-Իսթանբուլ: Հեռ.՝ 0212 629 08 08: ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ՝ Թուրքիա՝ 6 ամսուան 75 ԹԼ. Տարեկան 145 ԹԼ. Երոպա 6 ամսուան 85 Երո, Տարեկան 170 Երո, Ամերիկա եւ Գանատա 6 ամսուան 120 \$, Տարեկան 240 \$, Աւստրալիա՝ 6 ամսուան 135 \$, Տարեկան 265 \$: Ինթերնետ՝ www.agos.com.tr

## Ս ա ր է ն Զ ո ր է ն



# Վարդավառը այս տարի Տերսիմ եկաւ

### ՍԱՐԳԻՍ ՍԵՐՈՎՔԵԱՆ

Այս տարի, բացի Հայաստանէն, Պոլսոյ մի քանի եկեղեցիներու, մէկ ալ Տերսիմի լեռնաշխարհի կեդրոնին մէջ, այն ալ փողով-թմբուկով, 31 Յուլիս կիրակի, արեւածագէն առաջ եւ սակայն առանց աղօթքի, փոքրիկ խումբ մը հայեր մեծ խանդավառութեամբ սունեցիներ հայերուն ամենահին սունը՝ Վարդավառը:

Մօտ հարիւր տարի է, որ Եփրատ եւ Արածանի գետերուն կողմէ շրջապատուած ու մեր Միջագետք կոչած Տերսիմի լեռնաշխարհին վրայ Վարդավառ չէր տօնուած:

**Տօներու ամենահինն ու ջրոտը**

Աշխարհի վրայ միայն հայերն են որ Վարդավառ կը տօնեն, մէկ ալ՝ Համշէնցիները: Ուրիշ ոչ մէկ ազգ կամ հաւաքականու-

թին ունի, կամ ալ չէ պահեր Վարդավառ կոչուած այդ «ջրոտ» ասանդութիւնը: Մի-միայն Հայ ժողովուրդն էր, որ հեթանոսական սկզբնական շրջանին, նախքան բազմաստուած դառնալը, Արեւէն սկսելով պաշտեր է ջրոտը, կրակը, ծառը, հողը եւ բնական ամէն տեսակ իրականութիւնը, ինչ որ միտքը գայ:

Հին անուանումով «Ար» կոչուած Արեւը ի սկզբանէ ընդունուած էր որպէս աշխարհի ամենահզօր ու անփոխարինելի ուժը: Այդ պատճառաւ այս աշխարհագրութեան բնիկ ցեղախումբերը կոչուեցան արիական ցեղեր: Անոնք Արեւը պաշտեցին այնքան, որ իրենց անուններուն, նաեւ լեռներու, լիճերու, գետերու ու մինչեւ իսկ քաղաքներու անուններուն սկզբնական դարձաւ «Ար» մասնիկը:

Անփոխարինելի Ար-էն, կամ Արեւէն ետք Հայ ժողովուրդի պաշտամունքին մէջ իրենց տեղը գրաւեցին բնութեան այլ հզօրութիւն-

ներ, ինչպիսիք են ջրոտը, երկինքը, լեռները, մինչեւ իսկ ծառերը:

Ուրեմն՝ Վարդավառի սունի ասանդութիւնը կը լինու ջրոտի պաշտամունքի շրջանին, այսինքն մեր պատմագիրները այս ջրոտ սունը կապեր են Աստուածաշնչային Ջրհեղեղին եւ Նոյ Նահապետին, որոնք տապալեն իջնելու ժամանակ շաղապող անձրեւը ներկայացնելու համար մարդիկ զիրար կը թրջեն: Այսպէսով ալ Վարդավառը կը դառնայ հայերուն ամենահին սունը:

**«Ամէն բանին ատենը կայ»**

Կ'ըսեն թէ ամէն բան ժամանակ մը ունի: Թրքախօս հայն ալ կ'ըսէ՝ «Վարդավառ, ինչ պիտի շէյն վաքտը վար»:

Ուրեմն ժամանակը եկած էր եւ մենք 96 տարիներ ետք Տերսիմի նախկին հապաշատ մէկ շրջանին մէջ սունեցիներ Վարդավառը,

հարազատ հայկական ասանդութիւնը: Տերսիմցի Հայոց Հայրենակցական Միութեան հիմնադիր Միհրան Փրկիչի նախաձեռնութեամբ, այս տարի Միհրանի Փառասունին մասնակցելու համար կոչ ուղղուեցաւ Հայաստանի «Մարաթուկ» ժողովրդական պարախումբին, որ մօտ 40 հոգինոց խումբով մը եկաւ Տերսիմի կեդրոն՝ Թունճէլի ու իջեւանեցաւ մօտակա գիշերօթիկ դպրոցի մը անջարանին Ա. յարկը:

Պոլսէն ալ մեկնեցաւ Տերսիմահայերու Միութեան համակիրներու խումբ մը՝ Շիշլիի քաղաքապետութեան կողմէ տրամադրուած հանրաշարժով, որը մեզ անկի քան 20 ժամուան ճամբորդութեամբ, ու անցնելով Կերէտէ - Ամասիա - Երզնկայի ճանապարհով հասցուց Բյուրնոր, ուրիշ վերջ անցնելով Սլալու (Սուրբ Լոյս) լեռան մօտէն եկանք Խոյթիկ, ուր Խոյթալ Ջորի ժողովը-

դական փոքրիկ գեղատեսիլ վայրին անուանը փոխուած էր՝ «Գոյոթ Տերսիմ»:

Բջիջային հեռաձայնային կապերը այս լեռնաշխարհի մէջ ալ չէին իրար հասնիլ, ուրեմն առանց լուր ունենալու, պատահաբար հանդիպեցանք Տերսիմի կեդրոն՝ Թունճէլիի մտտեղին Միհրան Փրկիչին հետ, որ օրեր առաջ եկած, դիմաւորած էր հայաստանցի հիւրերն ու Մարաթուկի պարողները ու տեղաւորած մեր չորսօրեայ իջեւանին մէջ:

\*\*\*

«Կերած-խմածը բոլոր ըլլալ, պտուղած տեղերը պատմէ» կ'ըսեն: Մենք ալ այդպէս պիտի ընենք եւ Տերսիմեան մեր չորս օրերուն մասին պիտի պատմենք յաջորդ թիւերով, այս անգամ անջատելով Տերսիմի համարն ու Վարդավառի սունակատարութիւնը, որ կատարուեցաւ Փրկչական 2011 թուի Յուլիսի 31-ին ժամը 00.30-ին:

## Տերսիմէն պատկերներ

ԲԱԳՐԱՏ ԷՍԻՌԻԳԵԱՆ  
ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ՝ ԶԱՔԱՐԻՍ ՄԻՆԱՆՕԴԼՈՒ



Տերսիմցի երաժիշտ Միքայէլ Ասլան եւ Հայաստանցի Արտաշէս Խաչատուրեանի զուգորդ մեծապէս տպաւորիչ էր ու մեծ խանդավառութիւն ստեղծեց: Խաչատուրեան, որ Միքայէլ Ասլանի հետ ծանօթացած էր «Փեթակ» անուն ալպոմի պատրաստման շրջանին, հայերէնի թարգմանած է անոր «Ջազա» լեզուով մէկ «գլան»-ը: Այդ մեղեդիին երկելու կատարումը նաեւ ապացուցեց էր «Մարաթուկ» ազգագրական երգ-պարի համայնի հաղորդականութեան եւ համակերպելու կարողութեան:

Մահամերձ հաստատեցաւի համար երանութիւն է ստանալ Սուրբ Հաղորդութեան պատառը: Պարզապէս հայ ընտանիքի մը հանդիպելու ակնկալութեամբ այցելեցինք Մազկերտի մօտակա այս հայ տունը, ուր կար անկողնոյ ծառայող 96-ամեայ պապիկ մը: Տարեց հիւանդին սնարին վերեւ միաբերան երգուեցաւ «Հայր Մեր»-ը: Պահը տարբեր յուզումներ յառաջացուցած էր բոլորիս մօտ: Սակայն մեր զգացումներէն անկի, բոլորս հետաքրքիր էինք ներկայիս՝ հիւանդին ու անոր հարազատներուն զգացումներով: Հարազատները իրենց զոհումներովը արտապայտելու բառեր ունէին: Բայց հիւանդի շուրթերը պապանցած էին: Անոր զգացումը կը ցոլանար հետզհետէ խոշորացող թիքերուն մէջ միայն: Իսկ բոլոր այս միջոցառումներու, հանդիպումներու գլխատը կազմակերպիչ՝ «Տերսիմի Հայերու Հայրենակցական Միութեան» հիմնադիր Միհրան Փրկիչին զոհումներովը արցունքները մեզմէ շատեր չհակասեցին իսկ: Ան սպրդած էր սենեակէն դուրս եւ ապաստանած՝ բակին մէկ անկիւնը:



Վերջին անգամ ե՞րբ, ո՞ր թուին այսպէս Վարդավառ տօնուած էր այս հողերուն վրայ: Հայաստանէն, Պոլսէն, Տիարպէքիտէն ժամանած ու Տերսիմ մէկտեղուած շուրջ 90 հոգի, մեծ ոգեւորութեամբ զիրար թրջեցին, ուրախացան, զուարճացան եւ խխում դարձան: Ուրարտացիներու ջրապաշտութեան խորհրդանշան հանդիսացող «Մատար-Ար» (Wadar-Ar) (ուրիշ ծագում առած կրնայ ըլլալ Վարդավառ բառը) սունի ծիսական այս կիրարկումը աշխարհի վրայ միայն հայ ժողովուրդն է որ կը շարունակէ պահել ու տօնել: Յիշենք նաեւ որ Համշէնցի տարածքին այս ծէրը կը կատարուի շաբաթ մը տեւողութեամբ՝ «Վարդավառ» անունով:

Միհրանի Փառասունը Տերսիմի պատմական, քաղաքական ու աշխարհագրական յատկութիւններու բերումով միշտ իր մէջ կը պահէ նաեւ ընդդիմադիր երանգ մը: Տերսիմցիներ ամէն փաստասօսին բողոքելու շտապ հարցեր կ'ունենան:

11-րդ փաստասօսին վերջին օրն ալ կալա-

ցաւ հանրահաւաք ու երթ՝ ի նշան ջրաթումբերու եւ ելեկտրակայաններու կառուցման դէմ:

Պետութեան մշակած ծրագիրները կը միտին թէ՛ ջրոտերու տակ թողուլ բազմաթիւ սրբավայրեր եւ թէ փոխել գիւղերու կամ քաղաքներու աշխարհագրական դիրքերը:

Տերսիմ ունի իր յատուկ սրբութիւնները: Այդ սրբութիւնները կը երկնհիղուին կրօնական ու քաղաքական բնագաւառներու: Եթէ կրօնա-մշակութային առումով կը յիշուին Տուժիկը, Տուգիկն Պապան, Անահիտ չաստուածուհին, Մարգարէ Ալիին, Սուրբ Սարգիսը կամ Սուրբ Կարապետը, քաղաքական անձնանմանի սրբութիւններ են Մէլիտ Ռոզան, Իսրայիմ Քալփազպան, Արմենակ Պաքըրը եւ Հրանդ Տիմքը: Այս անուններու մեծահասակ որմազդներուն կարելի է հանդիպիլ ամենուրեք: Ամէն առթիւ պատի մը վրայէն ձեռք կը ծպտին երգիչներ՝ Բեազըմ Բոյունճու կամ Ահմէտ Քալպա, բանաստեղծներ Նազըմ Հիքմէթ կամ Ահմէտ Արիֆ: Տերսիմ եզակի է նաեւ իր նախապրութիւններով:



«Մարաթուկ» ասուտտուայ կանուխ ժամով հասաւ Մազկերտ, ուր քաղաքի մտտեղին դիմաւորուեցաւ ասանդական տոհմ-զուտակով: Հասարակական նախաձեռնի հիւրասիրութեան տեք, իսկուն գոյացան պարախումբեր, որոնք կը փորձէին վերակենդանացնել ոչ միայն տասնամեակներու, այլ բազում դարերու անցեալը: Ո՛վ գիտէ, մի գուցէ մեզ համար երանելի անցեալ եղածը տեղացի զազա ալեիներու կամ արեւապաշտ հայերու համար անխափան յարատեւող կենցաղ էր:

### Ծնորհակալութիւն

Տերսիմի Հայոց Հայրենակցական Միութեան անունով սրտագին շնորհակալութիւններ կը յայտնենք Մարաթուկ երգի ու Պարի Համայնի ճիշտագէտ անդամներուն, ինչպէս նաեւ վարչական եւ գեղարուեստական անդամը ղեկավարներուն, որոնք Հայաստանէն եկան Տերսիմ եւ դժուար պայմաններու մէջ, մեր միութեան անունով մասնակցեցան Միհրանի Փառասունին:

Նաեւ խորին շնորհակալութիւններ Շիշլիի մեծապարզ Բաղաքապետ Մուսաֆա Սարըկիլի եւ Փոխքաղաքապետ Վազգէն Պարընի, որոնք Պոլսէն Փառասունին մասնակցող մեր համակիր ու անդամներուն Տերսիմի ճամբորդութեան համար հանրաշարժ տրամադրեցին:

**Միհրան Փրկիչ Կիւլճէքին**  
**Նախագահ**  
**Տերսիմի Հայոց Հայրենակցական Միութեան**